



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան, Մամիկոնյանց 46/5

«23» 08 2019 թ.

№ 128-Ը

## ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018  
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 169-Լ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝

### Հանձնարարում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2018 թվականի  
հոկտեմբերի 29-ի «Վարույթում քննվող քրեական գործերի մասին տեղեկատվություն  
ներկայացնելու վերաբերյալ» թիվ 169-Լ հանձնարարականի (այսուհետ՝ հանձնարարական)  
2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Կոմիտեի կազմակերպական-վերլուծական բաժնի պետին՝ ամփոփել սույն  
հանձնարարականի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված տեղեկատվությունը  
շաբաթական և ամսական կտրվածքով: Շաբաթական ամփոփ թվային տվյալները Կոմիտեի  
նախագահին ներկայացնել յուրաքանչյուր երեքշաբթի, իսկ ամսական ամփոփումները՝  
գրավոր զեկուցագրի տեսքով մինչև հաջորդող ամսվա 10-ը:»:

2. Սույն հանձնարարականն ուղարկել Կոմիտեի նախագահի տեղակալներին,  
Կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների պետերին:

Հ. Գրիգորյան